Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112417366, 2112410586, 2112410774, 2112411068 և 2112411170 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<31>> 03 2021թ. 7-13 5398 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արմեն Բեջանյանի ՄԴ/26870-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նոր Նորք 9 զանգվածի 3 շենքի 40 բնակարանի բնակիչ Արմեն Բեջանյանը Ճանապարհային ոստիկանությանը հասցեագրած դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112417366, 2112410586, 2112410774, 2112411068, 2112411170, 2112254038 և 2112141831 որոշումները՝ նշելով, որ նման մեքենա չի ունեցել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112417366, 2112410586, 2112410774, 2112411068 և 2112411170 որոշումներն ենթակա են կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Նույն օրենքի 7.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված և սույն օրենքով քննության ենթակա իրավախախտումների գործերով վարույթն իրականացվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների համար պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծող կամ արտահանող (տրանսպորտային միջոցով որպես վարորդ Հայաստանի Հանրապետության սահմանը հատող) անձը**: Եթե տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել (Հայաստանի Հանրապետության սահմանը հատել է) այլ տրանսպորտային միջոցով (ավտոտարհանիչ, ավտոփոխադրող, կոնտեյներ)՝ ոչ տրանսպորտային վիճակում (առանց վարելու), ապա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների համար պատասխանատվությունը կրում է ավտոտարհանիչ, ավտոփոխադրող կամ կոնտեյներ տրանսպորտային միջոցի վարորդը, եթե

սույն օրենքի 7-րդ հոդվածի 5-7-րդ մասերով սահմանված կարգով չի ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ:

ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի կողմից շահագործվող ՍԵԿՏ համակարգի սերվերից ստացված տվյալների համաձայն <<MERCEDES-BENZ>> մակնիշի 9240GY հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը ՀՀ տարածք է ներմուծել քաղաքացի Արմեն Բեջանյանը (անձնագիր՝ AM0496414, ծնված՝ 07.11.1971թ.):

Այսպիսով, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112417366, 2112410586, 2112410774, 2112411068 և 2112411170 որոշումներն իրավաչափ են, օրինական և այն բեկանելու հիմքեր չկան:

Ինչ վերաբերվում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112254038 և 2112141831 որոշումներին, ապա դիմումատուի կողմից բաց է թողնվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված՝ վերը նշված որոշումների դեմ գանգատ տալու 30-օրյա ժամկետը, ուստի դիմումը դրանց մասով քննարկման ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112417366, 2112410586, 2112410774, 2112411068 և 2112411170 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արմեն Բեջանյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Մարգարյան
Հեռ. 060838402